Հավելված 1

ՀՀ Նախագահի
2014թ. սեպտեմբերի 16-ի
ՆՀ- 396 -Ն հրամանագրի

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ

1. Փառքի, Պատվո և Տիգրան Մեծի շքանշաններով պարգևատրելու միջնորդությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

2. «Մարտական խաչ» և Սուրբ Վարդան Մամիկոնյանի շքանշաններով պարգևատրելու միջնորդությունը ներկայացնում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենը:

3. Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» և Բարեկամության շքանշաններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մեդալներով պարգևատրելու և Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումներ շնորհելու միջնորդությունները ներկայացնում են Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ղեկավարները, Երևանի քաղաքապետը՝ տվյալ մարմինների և Երևանի քաղաքապետարանի գործունեության ոլորտին առնչության դեպքում:

4. Տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները Հայաստանի Հանրապետության մեդալներով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու միջնորդությունները ներկայացնում են համապատասխան միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց միջոցով:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 2

ՀՀ Նախագահի
2014թ. սեպտեմբերի 16 -ի
ՆՀ- 396 -Ն հրամանագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության պետական պարգևներով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու միջնորդությունները (այսուհետ՝ միջնորդություն) ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ:

2. Միջնորդությունները Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ են ներկայացնում սույն հրամանագրի 1-ին հավելվածում նշված պաշտոնատար անձինք:

3. Սույն հրամանագրի 1-ին հավելվածում չընդգրկված պաշտոնատար կամ այլ անձանց կողմից՝ պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու առաջարկություն ներկայացվելու դեպքում Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը կարող է կարծիք ստանալու նպատակով առաջարկությունը 5-օրյա ժամկետում ուղարկել համապատասխան պետական մարմնին կամ մարմիններին:

4. Տոնի կամ այլ հատուկ օրվա հետ կապված միջնորդությունները ներկայացվում են տվյալ օրվանից առնվազն 1 ամիս առաջ:

5. «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչում շնորհելու հարցը քննարկվում է Ազգային անվտանգության խորհրդի նիստում:

6. Միջնորդության մեջ նշված անձը կամ կոլեկտիվը չի տեղեկացվում միջնորդության մասին:

7. Միջնորդությունը ներկայացվում է գրավոր և ներառում է՝

1) պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու հիմնավորումը,

2) պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու ներկայացված անձի անունը, ազգանունը և հայրանունը,

3) պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու ներկայացված անձի զբաղեցրած պաշտոնը, գործունեության բնույթը,

4) պարգևի տեսակը կամ պատվավոր կոչումը:

8. Միջնորդությանը կցվում են՝

1) պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու ներկայացված անձի անհատական թերթիկը՝ համաձայն 1-ին ձևի,

2) պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու ներկայացված անձի բնութագիրը, որտեղ նշվում են այդ անձի կողմից մատուցված ծառայությունները,

3) պարգևատրման ներկայացված անձի կենսագրությունը,

4) պարգևատրման ներկայացված անձի անձնագրի, քաղաքացիությունը հաստատող փաստաթղթի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը:

9. Ծնողական փառքի մեդալով պարգևատրման ներկայացվելու դեպքում միջնորդությանը կցվում են նաև զավակների ծննդյան կամ որդեգրման վկայականները:

10. Գիտության, տնտեսության, կրթության, առողջապահության, մշակույթի բնագավառների և այլ կոլեկտիվների, ինչպես նաև զորամասերի պարգևատրման կամ «Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվ» պատվավոր կոչում շնորհելու միջնորդությունը ներառում է՝

1) պարգևատրման հիմնավորումը,

2) պարգևատրվող կոլեկտիվի անվանումը կամ զորամասի անվանումը կամ թիվը,

3) պարգևի տեսակը:

11. Գիտության, տնտեսության, կրթության, առողջապահության, մշակույթի բնագավառների և այլ կոլեկտիվների, ինչպես նաև զորամասերի պարգևատրման կամ « Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվ» պատվավոր կոչում շնորհելու միջնորդությանը կից ներկայացվում են՝

1) պարգևատրվող կոլեկտիվի կամ զորամասի թերթիկը՝ համաձայն 2-րդ ձևի,

2) պարգևատրման ներկայացված կոլեկտիվի կամ զորամասի գործունեությունը և պատմությունը, որտեղ պետք է նշվեն Հայաստանի Հանրապետությանը և հասարակությանը մատուցված ծառայությունները:

12. Անկախ միջնորդությունում նշված պետական պարգևի տեսակից կամ պատվավոր կոչումից՝ պարգևատրելու կամ պատվավոր կոչում շնորհելու հարցը, ինչպես նաև պետական պարգևի տեսակը որոշում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև 1

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

(միջնորդություն ներկայացնող մարմնի անվանումը)

Միջնորդում ենք ----------

(պարգևատրման, պատվավոր կոչում շնորհելու ներկայացված անձի անունը, հայրանունը, ազգանունը)

Ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը ----------

Մահվան թիվը, ամիսը, ամսաթիվը, (եթե պարգևատրման, պատվավոր կոչում շնորհելու է ներկայացվել հետմահու)

Ծննդյան վայրը ----------

Սեռը ---------- քաղաքացիությունը ----------

Կրթությունը (երբ և որ ուսումնական հաստատությունն է ավարտել) ----------

---

Երբ և ինչ պետական պարգևներով է պարգևատրվել և ինչ կոչումների է արժանացել--------

---

Աշխատանքի վայրը, պաշտոնը կամ գործունեության բնույթը ----------

---

Կոչումը (գիտական, զինվորական և այլն) ----------

Տեղեկություններ աշխատանքային գործունեության մասին ----------

Ընտանեկան դրությունը ----------

Բնակության վայրը ----------

Այլ տվյալներ ----------

Պարգևատրել ----------

(ՀՀ պետական պարգևի անվանումը)

Շնորհել----------

(ՀՀ պատվավոր կոչման անվանումը)

Մարմնի ղեկավար՝ Կ. Տ.

(ստորագրությունը)

Ձև 2

ԹԵՐԹԻԿ

(միջնորդություն ներկայացնող մարմնի անվանումը)

Միջնորդում ենք ----------

(պարգևատրման, «ՀՀ վաստակավոր կոլեկտիվ» պատվավոր կոչմանը ներկայացված կոլեկտիվի կամ զորամասի անվանումը կամ թիվը)

Հիմնադրման, կազմավորման տարեթիվը ----------

Երբ և ինչ պետական պարգևներով է պարգևատրվել ----------

Գործունեության վայրը ----------

Այլ տվյալներ ----------

Պարգևատրել ----------

(ՀՀ պետական պարգևի անվանումը)

Շնորհել ----------

«ՀՀ վաստակավոր կոլեկտիվ» պատվավոր կոչումը:

Մարմնի ղեկավար՝ Կ.Տ.
(ստորագրությունը)

Հավելված 3

ՀՀ Նախագահի
2014թ. սեպտեմբերի 16-ի
ՆՀ- 396 -Ն հրամանագրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ,
ՇԵՐՏԱՁՈՂԻԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐԸ

Հայրենիքի շքանշան

Հայրենիքի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) ունի սկավառակի տեսք, որը շրջափակված է միմյանց հերթագայող երկու ութակողմ բազմանկյունաձև երիզներով: Սկավառակի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, վերին հատվածում՝ ցորենի երկու հասկ, իսկ ներքևում գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառերը:

Շքանշանն ամրացվում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը խորհրդանշող ժապավենին: Ժապավենի լայնությունը 50 մմ է:

Շքանշանը պատրաստված է 925 հարգի արծաթի համաձուլվածքից: Շքանշանի շրջանագծի տրամագիծը 97 մմ է:

Շքանշանն ունի գոգավոր շրջանաձև հորինվածքով կրծքանշան՝ երիզված ութաթև աստղով: Աստղի թևերի անկյուններում տեղադրված են պտղաբերություն խորհրդանշող զարդեր: Շրջանաձև հորինվածքի կենտրոնում ուռուցիկ ձևով պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը: Կրծքանշանի չափերն են՝ 42 մմ x 42 մմ:

Կրծքանշանը պատրաստվում է ոսկուց: Շրջագիծը, ութաթև աստղը, զարդաքանդակն անփայլ են, իսկ Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ փայլեցված:

Կրծքանշանն ամրացվում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշը խորհրդանշող ժապավենի կենտրոնում: Ժապավենն ավարտվում է ծոպերով, որոնք ազուցված են ոսկե օղակով: Ժապավենի չափերն են՝ 60 մմ x 21 մմ, իսկ ծոպերի երկարությունը՝ 10 մմ:

Կրծքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը կրում է շքանշանի ժապավենի գունային նկարագիրը:

Փառքի շքանշան

Փառքի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) պատրաստված է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, որին արտագծված շրջանագծի տրամագիծը 97 մմ է: Այն ուռուցիկ երկթև հնգանկյուն է, որի բոլոր ճառագայթները դեպի կենտրոն ուռուցիկ են: Հնգաթև աստղի թևերը ծածկված են բրգաձև մանր տարրերով, իսկ նրանց միջև ընկած տարածքում կան ճառագայթաձև պատկերներ:

Շքանշանի կենտրոնում կա կլոր հարթակ, որի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ պատված եռագույն արծնով: Զինանշանը եզերվում է դափնու տերևներով, իսկ զինանշանի և դափնեպսակի միջև ընկած տարածքը պատված է սպիտակ արծնով: Շքանշանը ոսկեպատված է 999 հարգի ոսկով:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է: Շքանշանը դարձերեսի կենտրոնական մասում ունի հատուկ ամրակ՝ ժապավենին ամրանալու համար: Ժապավենը մուգ կարմիր է, լայնությունը՝ 110 մմ:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկը մուգ կարմիր է, կենտրոնում ամրացված է ուղղանկյունաձև պատվանդան՝ ութաթև աստղով:

Տիգրան Մեծի շքանշան

Տիգրան Մեծի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) ութաթև աստղ է (միմյանց հերթագայող 2 հավասարաչափ քառակուսի): Շքանշանը բոլոր անկյունագծերով 55 մմ է: Շքանշանը պատրաստված է 585 հարգի ոսկուց և 925 հարգի արծաթից: Շքանշանի վրա ագուցված են տարբեր չափերի 23 ադամանդ և 8 արհեստական սուտակ:

Շքանշանի հիմքը պատրաստված է 925 հարգի արծաթից: Շքանշանի դիմային կողմը մանրագլանվածքային է: Դիմային կողմից հիմքի եզրագծով 1,5 մմ լայնության եզրաշերտ է: Քառակուսիների համադրությունը պատրաստված է 585 հարգի ոսկուց, 8 անկյուններում ագուցված է 0,1 կարատանոց մեկական ադամանդ: Քառակուսիների համադրումից առաջացած 8 եռանկյունաձև անկյուններում ագուցված է 8 եռանկյունաձև արհեստական սուտակ:

Շքանշանի շրջանակը պատրաստված է 925 հարգի արծաթից, կենտրոնում տեղադրված է Տիգրան Մեծի դիմանկարը՝ աջ կիսադեմով: Դիմանկարը ոսկեզօծ է և եզերապատված 0,07 կարատանոց 15 ադամանդով: Շրջանակի ներքևի հատվածում արծնապատ կարմիր ֆոնին վրա 925 հարգի արծաթով գրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ֆոնը սպիտակ է, կենտրոնում 8 մմ-անոց կարմիր շերտ է, որի երկու կողմից 1 մմ-անոց դեղին շերտեր են:

«Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշան

«Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) ունի քառաթև խաչի տեսք: Խաչը պատրաստված է ոսկեզօծված արծաթից: Խաչի թևերի չորս անկյունների ճառագայթները ոսկեզօծված են:

Խաչի թևերի երկարությունը կենտրոնից 14 մմ է: Խաչն ամրացված է շքանշանի ժապավենի ներքևի մասում: Ժապավենի երկարությունը 70 մմ է, լայնությունը՝ 19 մմ, պատրաստված է կարմիր գույնի մետաքսից՝ երիզված 2 սպիտակ զոլերով: Ժապավենի կարմիր գոտու վրա՝ խաչից վեր, 3 մմ բարձրությամբ ամրացված է ոսկուց պատրաստված՝ Հայաստանի Հանրապետության զինանշանը: Ժապավենը ձգված է մետաղյա թերթիկի վրա:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը կրում է շքանշանի ժապավենի գունային նկարագիրը:

«Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան

«Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) ունի քառաթև խաչի տեսք: Խաչը պատրաստված է ոսկեզօծված արծաթից: Խաչի թևերի չորս անկյունների ճառագայթները պատրաստված են արծաթից: Խաչի թևերի երկարությունը կենտրոնից 14 մմ է: Խաչն ամրացված է շքանշանի ժապավենի ներքևի մասում: Ժապավենի երկարությունը՝ 70 մմ է, լայնությունը՝ 19 մմ, պատրաստված է սպիտակ գույնի մետաքսից՝ երիզված 2 կարմիր զոլերով: Ժապավենի սպիտակ գոտու վրա՝ խաչից վերև, 3 մմ բարձրությամբ ամրացված է Հայաստանի Հանրապետության արծաթագույն զինանշանը: Ժապավենը ձգված է մետաղյա թերթիկի վրա:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը կրում է շքանշանի ժապավենի գունային նկարագիրը:

Սուրբ Վարդան Մամիկոնյանի շքանշան

Սուրբ Վարդան Մամիկոնյանի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) հավասարաթև խաչ է՝ քառակուսու յուրաքանչյուր կողմում 5 մմ երկարությամբ և 5 մմ խորությամբ կիսակլոր բացվածքով:

Շքանշանը 2 անկյունագծով 55 մմ է, կշիռը՝ 50 գրամ: Շքանշանը պատրաստված է 925 հարգի արծաթից, Վարդան Մամիկոնյանի դիմապատկերը՝ ոսկուց: Շքանշանի վրա ագուցված է տարբեր չափերի 9 կապույտ շափյուղա:

Խաչի կենտրոնում՝ շրջագծով, որի տրամագիծը 156 մմ է, արծաթե ֆոնին տեղադրված է Վարդան Մամիկոնյանի դիմանկարը՝ աջ կիսադեմով: Ոսկեզօծ ֆոնին՝ 925 հարգի արծաթով գրված են՝ վերևում «ՍՊԱՐԱՊԵՏ», ներքևում «ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ» մակագրությունները:

Շքանշանը եզերող 27 մմ տրամագծով շրջանակի 4 հատվածներում պատկերված են դափնու ճյուղեր, իսկ դափնու ճյուղերի և եզրաշերտի միջև ընկած փոսորակ հատվածը պատված է բաց երկնագույն արծնապատ շերտով:

Խաչի ներքևի ծայրից դեպի վերին հատված է բարձրանում և աջ թևից դեպի ձախ է գնում երկթեք շերտ, որոնց աջակողմյան, ձախակողմյան և ներքևի թևերի վերջնամասերում տեղադրված են ընդհանուր պատկերին թրի կոթի տեսք հաղորդող երեքական շրջանակներ: 3 կողմերի 5 մմ տրամագիծ ունեցող շրջանակների մեջ ագուցված է 2, իսկ 4 մմ տրամագիծ ունեցող 2 շրջանակների մեջ՝ 1 կարատանոց կապույտ շափյուղա:

Խաչի ամբողջ եզրագիծն ընդգծված է ոսկու 1,5 մմ-անոց շերտով:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ֆոնն արծաթագույն է, կենտրոնում 8 մմ ծիրանագույն շերտն է:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) ունի ութաթև վարդյակի տեսք, որի անկյուններում տեղադրված են ճառագայթաձև զարդեր:

Վարդյակը կենտրոնում ունի փորվածք, որտեղ տեղադրված է Մեսրոպ Մաշտոցի պատկերը՝ լուսապսակով, ձախ ձեռքին բացված գիրք է, աջ ձեռքը բարձրացված է դեպի վեր: Պատկերի ներքևում կա 3 տողով մակագրություն՝ «ՍԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ»:

Վարդյակն արծաթից է՝ ոսկեջրված, Մաշտոցի պատկերը և մակագրությունը փայլեցված են, իսկ մնացածը՝ անփայլ: Շքանշանի վերին թևը, որը նույնպես անփայլ է, ունի շեղանկյուն զարգացում՝ ճառագայթաձև փորվածքով, որի կենտրոնում ամրացված է ադամանդ՝ մոտավորապես 0,125 կարատի չափով: Շքանշանի չափերն են՝ 40 մմ x 40 մմ, շեղանկյանը՝ 15 մմ x 15 մմ:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենի երիզներն արծաթափայլ են, մեջտեղը՝ մուգ վարդագույն:

Պատվո շքանշան

Պատվո շքանշանը (այսուհետ՝ շքանշան) պատրաստված է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, որին արտագծված շրջանագծի տրամագիծը 97 մմ է: Ունի ուռուցիկ երկթև հնգանկյան տեսք, որի բոլոր ճառագայթները դեպի կենտրոն ուռուցիկ են: Հնգաթև աստղի թևերը ծածկված են բրգաձև մանր տարրերով, իսկ նրանց միջև ընկած տարածքում ճառագայթաձև պատկերներ են:

Շքանշանի կենտրոնի կլոր հարթակում պատկերված է ոսկեգույն արծիվ՝ Արարատ լեռան ֆոնին: Արծվից ներքև ոսկեգույն ուռուցիկ տառերով գրված է «ՀԱՅԱՍՏԱՆ» բառը: Պատկերները եզերված են ոսկեգույն դափնու տերևներով, իսկ դրանց և դափնեպսակի միջև ընկած տարածքը պատված է կաթնագույն արծնով: Շքանշանը ոսկեպատված է 999 հարգի ոսկով:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանը դարձերեսի կենտրոնական մասում ունի հատուկ ամրակ՝ ժապավենին ամրանալու համար: Ժապավենը բաց կապույտ է, լայնությունը 40 մմ է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկը բաց կապույտ է, կենտրոնում ամրացված է ուղղանկյունաձև պատվանդան՝ ութաթև աստղով:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշան

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) պատրաստված է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, որի չափերն են՝ 65 մմ x 65 մմ: Ունի ութակողմ ճառագայթաձև բազմանկյան տեսք, որի բոլոր ճառագայթները դեպի կենտրոն ուռուցիկ են: Պատկերի ուղիղ կենտրոնում ոսկեգույն խաչ է, որի չորս թևերը պատված են մուգ կարմիր արծնով:

Խաչի կենտրոնի կլոր հարթակի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության ոսկեգույն զինանշանը: Զինանշանը եզերված է դափնեպսակով, որը բոլորված է ոսկեգույն ուռուցիկ տառերով գրված «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ» բառերով:

Շքանշանի ոսկեգույն պատկերները պատված են 99.9 հարգի ոսկով: Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը մուգ կարմիր է:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի շքանշան

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի շքանշանը (այսուհետ՝ շքանշան) պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, որի չափերն են՝ 65 մմ x 65 մմ: Շքանշանն ունի ութակողմ ճառագայթաձև բազմանկյուն, որի բոլոր ճառագայթները դեպի կենտրոն ուռուցիկ են: Պատկերի կենտրոնում կա խաչ, որի չորս թևերը պատված են մուգ մանուշակագույն արծնով:

Խաչի կենտրոնի կլոր հարթակում պատկերված է Հայաստանի Հանրապետության արծաթագույն զինանշանը: Զինանշանը եզերված է դափնեպսակով, որը բոլորված է արծաթագույն ուռուցիկ տառերով գրված «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ» բառերով:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը մուգ մանուշակագույն է:

Բարեկամության շքանշան

Բարեկամության շքանշանը (այսուհետ՝ շքանշան) պատրաստված է 925 հարգի արծաթի համաձուլվածքից՝ պատված բարձր հարգի ոսկով: Շքանշանի արտագծած շրջանագծի տրամագիծը 65 մմ է, այն ունի ուռուցիկ, հնգաթև խաչի տեսք, որի բոլոր թևերը դեպի կենտրոն ուռուցիկ են: Հնգաթև ուրվագծերի եզրային շերտերը պատված են 5 տարբեր գույների սառը արծնով՝ խորհրդանշելով աշխարհի 5 մայրցամաքները:

Շքանշանի կենտրոնի կլոր հարթակը եզերված է ցորենի հասկերով: Հարթակի վերևի մասում կորաձ գրված է «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» բառը: Շքանշանի կենտրոնը եզերված է շղթայաձև նախշազարդով, որի կենտրոնական մասում՝ երկրագնդի ֆոնին պատկերված է բարեկամության խորհրդանիշը՝ ձեռքսեղմումը: Կենտրոնական պատկերը պատված է տարալեզու գրերով (Միավորված ազգերի կազմակերպության 6 պաշտոնական լեզուներով), որոնք թարգմանաբար նշանակում են «Բարեկամություն»:

Շքանշանը պատված է 99.9 հարգի ոսկով:

Շքանշանը դարձերեսի կողմից համարակալված է:

Շքանշանի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը մուգ կարմիր է, մեջտեղում՝ կարմիր, կապույտ, նարնջագույն զոլակով:

Արիության մեդալ

Արիության մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է:

Սկավառակի կենտրոնում պատկերված է հաղթանակի խորհրդանիշը՝ արծիվը և թուրը: Արծիվը տիրաբար տարածված է սկավառակի ողջ մակերեսին, լույսի շողերը թագի նման պարուրում են արծվի գլուխը: Սկավառակի ներքևի մասում կա մակագրություն՝ «ԱՐԻՈՒԹՅՈՒՆ»: Արծիվը, թուրը, լույսի շողերը և մակագրությունը ոսկեփայլ են, մնացած դաշտը՝ անփայլ:

Սկավառակը պատրաստված է արծաթի հատուկ համաձուլվածքից, արտադրված է դրոշմման եղանակով: Այն անցնում է հատուկ մշակում և ձեռք բերում հատուկ գունավորում, ինչպես նաև անցնում է տեղային ոսկեպատում՝ 99.9 հարգի ոսկով:

Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է երկնագույն, մեկ եզրը՝ 24 մմ լայնության ծիրանագույն մետաքսե ժապավենով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները 39 մմ են, վերևի մասի երկարությունը՝ 27 մմ, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի երկարությունը վերևի մասի կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է:

Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է:

Մեդալի շերտաձողիկը պատրաստվում է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենն ունի մեդալի ժապավենի գունային նկարագիրը:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»
1-ին աստիճանի մեդալ

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 28 մմ է:

Սկավառակը պատրաստված է արծաթագույն մետաղից, կենտրոնում նույն մետաղի համաձուլվածքից պատկերված է 36 մմ տրամագծով՝ արիության խորհրդանիշ խաչաձև պատկեր, որի կողմերը դրսի մասում ունեն 14 մմ լայնություն, իսկ դեպի կենտրոն՝ 5 մմ կորություն: Խաչաձև պատկերի կողմերը 4 մմ հավասարապես դուրս են բերված սկավառակի տրամագծից և դեպի դուրս ունեն 45 աստիճանի թեքություն: Խաչաձև պատկերի կողմերն արծնապատված են մուգ կարմիրով և ունեն 1,5 մմ լայնության արծաթափայլ եզրաշերտ:

Խաչաձև պատկերի կենտրոնական մասում պատկերված է 12 մմ տրամագծով շրջան՝ 1 մմ եզրաշերտով: Շրջանի եզրագծից 1 մմ դեպի կենտրոն ամբողջ ծավալով Հայաստանի Հանրապետության զինանշանի ոսկեփայլ ցայտաքանդակն է:

Խաչաձև պատկերի կողմերի միջնամասում՝ սկավառակի վրա, պատկերված է հավասարակողմ եռանկյուն, որի կողմի երկարությունը 8 մմ է, իսկ հաստությունը՝ 1,5 մմ: Եռանկյան դրսի կողմը 2 մմ դուրս է բերված սկավառակի տրամագծից և ունի ուռուցիկ տեսք:

Մեդալի դարձերեսին՝ 5 զուգահեռ տողով, ուռուցիկ տառերով գրված են «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆ» բառերը: Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է:

Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության մուգ կարմիր մետաքսե (մուարե) ժապավենով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունը 39 մմ է, վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը՝ կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է:

Ժապավենի կենտրոնով՝ վերից վար անցնում է 4 մմ լայնություն ունեցող մուգ կապույտ շերտագիծ:

Մեդալի շերտաձողիկի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենն ունի մեդալի ժապավենի գունային նկարագիրը:

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»
2-րդ աստիճանի մեդալ

«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 28 մմ է:

Սկավառակը պատրաստված է արծաթագույն մետաղից, կենտրոնում նույն մետաղի համաձուլվածքից պատկերված է 36 մմ տրամագծով՝ արիության խորհրդանիշ խաչաձև պատկեր, որի կողմերը դրսի մասում ունեն 14 մմ լայնություն, իսկ դեպի կենտրոն՝ 5 մմ կորություն: Խաչաձև պատկերի կողմերը 4 մմ հավասարապես դուրս են բերված սկավառակի տրամագծից և դեպի դուրս ունեն 45 աստիճանի թեքություն: Խաչաձև պատկերի կողմերը պատված են մուգ կապույտ արծնով և ունեն 1,5 մմ լայնության արծաթափայլ եզրաշերտ:

Խաչաձև պատկերի կենտրոնական մասում պատկերված է 12 մմ տրամագծով շրջան՝ 1 մմ եզրաշերտով: Շրջանի եզրագծից 1 մմ դեպի կենտրոն ամբողջ ծավալով պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանի ոսկեփայլ ցայտաքանդակը:

Խաչաձև պատկերի կողմերի միջնամասում՝ սկավառակի վրա պատկերված է հավասարակողմ եռանկյուն, որի կողմի երկարությունը 8 մմ է, իսկ հաստությունը՝ 1,5 մմ: Եռանկյան դրսի կողմը 2 մմ դուրս է բերված սկավառակի տրամագծից և ունի ուռուցիկ տեսք:

Մեդալի դարձերեսին՝ 5 զուգահեռ տողով, ուռուցիկ տառերով գրված են «ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆ» բառերը: Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է:

Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության մուգ կարմիր մետաքսե (մուարե) ժապավենով:

Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունը 39 մմ է: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է: Կախիչի դարձերեսին ամրացված է գնդասեղ:

Ժապավենի կենտրոնով՝ վերից վար անցնում է 4 մմ լայնություն ունեցող մուգ կապույտ 2 շերտագիծ, որոնք իրարից անջատված են 2 մմ հեռավորությամբ:

Մեդալի շերտաձողիկի չափերն են՝ 25 մմ x 12 մմ: Շերտաձողիկի ժապավենն ունի մեդալի ժապավենի գունային նկարագիրը:

Մարտական ծառայության մեդալ

Մարտական ծառայության մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, կենտրոնում պատկերված են թուր և դափնեպսակ:

Թրի աջ և ձախ կողմերում պատկերված են երեքական հաղթական դրոշներ: Սկավառակի ներքևի մասում կա մակագրություն «ՄԱՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»: Թուրը, դրոշները, դափնեպսակը, ինչպես նաև մակագրությունը ոսկեփայլ են, մնացածը՝ անփայլ:

Սկավառակը պատրաստված է արծաթի հատուկ համաձուլվածքից և արտադրված է դրոշմման եղանակով: Այն անցնում է հատուկ մշակում և ձեռք բերում հատուկ գունավորում, ինչպես նաև անցնում է տեղային ոսկեպատում՝ 99.9 հարգի ոսկով:

Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության մետաքսե ժապավենով: Ժապավենը երկնագույն է, երկու սպիտակ և մեկ մուգ կապույտ զոլերով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները նույնն են՝ 39 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի երկարությունը վերևի մասի կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է:

Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է:

Մեդալի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենն ունի մեդալի ժապավենի գունային նկարագիրը:

Մխիթար Գոշի մեդալ

Մխիթար Գոշի մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, կենտրոնում պատկերված է Մխիթար Գոշը՝ արդարության խորհրդանիշ նժարի ֆոնին: Ձախ ձեռքին «Դատաստանագիրքն» է, աջը բարձրացված է երդման համար:

Սկավառակն ունի ուռուցիկ եզրաշերտ: Մեդալը պատրաստված է բրոնզապատ պղնձից, ներքևի մասում կա մակագրություն «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ»:

Սկավառակը պատրաստված է պղնձի հատուկ համաձուլվածքից և արտադրված է դրոշմման եղանակով: Այն անցնում է հատուկ մշակում և ձեռք բերում հատուկ գունավորում:

Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության մետաքսե ժապավենով: Ժապավենը ծիրանագույն է՝ կարմիր երիզներով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները 39 մմ են: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի երկարությունը վերևի մասի կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է:

Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է:

Մեդալի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը կրում է մեդալի ժապավենի գունային նկարագիրը:

Մխիթար Հերացու մեդալ

Մխիթար Հերացու մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված հավասարաչափ կորագծային խաչից՝ անկյուններում զարդերով, որոնց կենտրոնում պատկերված է Մխիթար Հերացի բժշկապետը երդման պահին, հետնամասում հիվանդն է՝ պառկած դիրքով:

Խաչն ունի եզրաշերտ, թևերի երկարությունը կենտրոնից 20 մմ է, վերին թևը ներսի կողմից զարդարված է գնդիկներով, իսկ ներքևի թևում՝ կյանքի հավերժության նշանն է և «ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ» մակագրությունը:

Խաչը պատրաստված է պղնձի հատուկ համաձուլվածքից և արտադրված է դրոշմման եղանակով: Այն անցնում է հատուկ մշակում և ձեռք բերում հատուկ գունավորում:

Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության մետաքսե ժապավենով: Ժապավենը մուգ կապույտ է: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները նույնն են՝ 39 մմ: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի երկարությունը վերևի մասի կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է:

Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է:

Մեդալի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը կրում է մեդալի ժապավենի գունային նկարագիրը:

Անանիա Շիրակացու մեդալ

Անանիա Շիրակացու մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Սկավառակի տրամագիծը 35 մմ է, կենտրոնում պատկերված է Անանիա Շիրակացին՝ նստած դիրքով, ձախ ձեռքը՝ երկրագնդի վրա, դիմացը՝ գիրք և աստղազարդ երկինք:

Սկավառակն ունի լայն երիզ, որի վերևի մասում պատկերված են աստղեր, ներքևի մասում կա մակագրություն՝ «ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ»:

Սկավառակը պատրաստված է պղնձի հատուկ համաձուլվածքից և արտադրված է դրոշմման եղանակով: Այն անցնում է հատուկ մշակում և ձեռք բերում հատուկ գունավորում:

Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ լայնության մետաքսե ժապավենով: Ժապավենը ծիրանագույն է՝ մուգ կապույտ երիզներով: Կախիչի աջ և ձախ կողմերի բարձրությունները 39 մմ են: Կախիչի վերևի մասի երկարությունը 27 մմ է, ներքևինը՝ 47 մմ, հաստությունը՝ 1 մմ: Կախիչի երկարությունը վերևի մասի կենտրոնից մինչև ներքևի գագաթը 50 մմ է:

Մեդալը դարձերեսի կողմից համարակալված է:

Մեդալի շերտաձողիկը պատրաստված է մետաղյա թերթիկից, որի չափերն են՝ 25 մմ x 10 մմ: Շերտաձողիկի ժապավենը կրում է մեդալի ժապավենի գունային նկարագիրը:

Մովսես Խորենացու մեդալ

